

«Մեզ բոլորիս կարող է կաշկանդել միայն օրենսդրությունը». Ռոմանոս Պետրոսյան Կոտայքի մարզպետը շարունակում է համայնքային այցերը:

10.08.2018

Հերթական կանգառներն էին Նոր Գեղին, Արգելը, Թեղենիքն ու Քարաշամբը: Նոր Գեղի համայնքի դպրոցում տեղի ունեցած հանդիպման ժամանակ Ռոմանոս Պետրոսյանն առանձնացրեց սկզբունքային երկու կետեր, որոնք կարևոր են դպրոցների արժանապատիվ աշխատանքի և որակյալ կրթություն ապահովելու համար:

«Դպրոցներում այլևս ոչ ոք չպետք է խոսի քաղաքականությունից, սա կրթօջախ է: Եվ երկրորդը, օրենքով արտաբյուջետային միջոցներ դպրոցներում լինել չեն կարող, սա նշանակում է, որ ցանկացած լումա հավաքելը հակաօրինական է»,- ասաց Ռոմանոս Պետրոսյանը:

Հանդիպումների ընթացքում մարզպետը խոսեց յուրաքանչյուրի՝ սեփական դերի կարևորության գիտակցման մասին, քանի որ բոլորն այսուհետ առաքելություն իրականացնող են:

«Տքնաջան պետք է աշխատենք բոլորս՝ ամենքս մեր տեղում, արդյունքների համար էլ լինենք պատասխանատու: Ոչ ոք չպետք է ուղղակի գնա «գործի».

դա այլևս անթույլատրելի է»,- ասաց Ռոմանոս Պետրոսյանը:

Շրջայցի ընթացքում հանդիպումներ եղան Նոր Գեղիի «Ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջում»-ում, բոլոր մշակույթի կենտրոններում, դպրոցներում, համայնքապետարաններում, որոնց ներկա էին նշված կառույցների աշխատակիցները և քաղաքացիներ: Ամենատարբեր ոլորտներին առնչվող մի խումբ հարցեր, մարզպետի հանձնարարականով, կլինեն պաշտոնատար անձանց ուշադրության կենտրոնում:

«Ես տեսնում եմ, որ փոքր շրջանակներում դեռ երբեմն ճիգեր են գործադրվում մեղմելու դժգոհությունները, բայց վստահեցնում եմ. այլևս որևէ մեկին լռեցնելու ջանքերն ապարդյուն են լինելու»,- ասաց մարզպետը, երբ դժգոհություններով հանգես եկող քաղաքացուն սաստելու փորձ եղավ:

Այցի պահին Արգել համայնքի մշակույթի տանն աշխատում էր «Լուսաբաց» պարի համույթը, ինչը կարևորվեց՝ գյուղաբնակ երիտասարդների կրթամշակութային դաստիարակությունը գործնականում տեսնելու և գնահատելու տեսանկյունից: Մարզպետը նաև ծաղիկներ դրեց Արգելի զոհված ազատամարտիկների պուրակում ամփոփված շիրիմներին: